

լուելով պատմիչք, հազար ու մէկ կարծեաց մէջ կ'ընդունն զյետագայս:

Պատմութիւնը ցոյց կտայ մեզ երկու առիթ, որով սուրբ հայրապետն Ներսէս «Ի քաղաքի գաշտի», շինեց զսուրբն Վրիգոր. առաջինն էր, որ Առստանդին կայսեր գանձիւքը շինեց՝ որ շերակ կայսեր որդին էր. «Եւ ի նաւակատիս, վկայէ որ՝ կոչեաց զԹագաւորն Հուռոմոց», Մովսէս Ապղտ. Գ. ԺԵ:

Երկրորդ առիթն էր, որ սրբոյն Վրիգորի նշխարքը ամփոփեց սուրբ հայրապետը եկեղեցւոյ չորս սեան հաստահողոյս հիմանց ներքոյ, զոր բերած էր ի Վաղարշապատ Վրիգոր Մամիկոնեան իշխանը ի Թորդանայ. իսկ զՎրիստոսազրոյժ և զպատուական գլուխն կվկայէ Յովհ. Աթուղիկոս թէ՛ «ոչ ի խորոջ, այլ արտաքոյ ի գզրոցի եղեալ, զնէ ի դանձարան աստուածութեանն . . . և ի բժշկութիւն աստակրեոցն», :

Ե՛լլ ցաւ է յոյժ և խնդիր միշտ հետաքրքրական և փափագելի, թէ ո՛ւր մընաց յետ ժամանակաց և ի՛նչ եղաւ այս երկնաւոր գանձն, զպատուական գլուխն. որոյ համար և ո՛չ մի պատմիչք չեն առնել յիշատակութիւն կամ տալ տեղեկութիւն ի ծանօթութիւն յետագայից:

Թող զայս, մեր հաւատոյ սուրբ հօր «նշխարս ոսկերաց», այսքան դարաւոր ժամանակ բաժանեալ զրուած ի ներքոյ չորից սեանց հաստահողուօրից», եկեղեցին Փրկչական 1000 թուականին, որ հարբաւոր տարի յառաջ աւերուած էր ի Տաճկաց ու կործանուած, ի հարկէ օտարի դուռորով շինուածքն էլ այսքան միայն կարող էր աւել, որ կը զօշոտէր

թշնամու աչքը. յօրէ անախ մինչև ցոյսօր բարեկաշտ ու վկայասէր Հայր գոնէ միանդամ ևս միտք չբերեց այս անգին գանձն աստուածային ի խորոց անախ ի ներքոյ չորից սեանցն հաստահողուօրից հանել, և փոխանակ զլսոյն՝ զայն գնել «արտաքոյ ի գզրոցի ի պարծանս հաւատոյ քրիստոնէական կարգաց՝ ի յոյս բարեաց փափագողացն նմա», — երբ իսպառ կործանած է սուրբ Վրիգոր և հոգի հաւասար եղած: — Ե՛յսպէս ահա կպատուեմք մեր քրիստոնէական սրբութիւնքն և ազգային հնութիւնք:

(ՏՐՈՒՆԻՆԻՆԷ)  
ԱՐԷԼ ԱՐԵՊԵՊԻՍԿՈՍ

ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՂԵՐԱՅ.

Մօտ օրերս ձեռս անցաւ մի գիրք, որոյ վերնագիրն էր «Պատմութիւն Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ, արարեալ ի Մ. Վ. արդապետէ Մուրատեանց յուխտէ սրբոց Յակոբեանց՝ (տպեալ) յԱրուսաղէմ, 1872 ամի», :

Երկասիրութիւն արդարև զովելի և բաւականին կհամապատասխանէ նպատակին, բայց ցաւելով ասեմ, որ հեղինակն անշուշտ պղտորեալ աղբիւրէ է առած իւր ծանօթութիւնները Ղուկաս Աթուղիկոսի մասին, ինչպէս 592 երեսուժը կասէ էսպէս:

«Սիմէօնին կյաջորդէ Ղուկաս Արանցի (1780), որոյ Աթուղիկոսութեան ժամանակ Պօլսոյ Պատրիարքն էր Չաքարիա, . . . Ղու-

կատու վրայ կատկած կծաղի Լճմիածնի միաբանից մէջ, որպէս թէ իւր աշակերտակից Թէքիրազցի Սարգիս վարդապետի հետամտութեամբ կամի շայտատանեայց եկեղեցին միացնել շնորհապատեանց և կեղեցին միացնել շնորհապատեանց և կեղեցին միացնել շնորհապատեանց և կեղեցին միացնել շնորհապատեանց (°): Եւս կատկածը երթալով ստոյգ կերպարանք կանու (°), ուստի և Ղուկասը սաստիկ կնոջտանգուի Լճմիածնի միաբաններէն և կաքտորուի: Սակայն ձեռնառութեամբ շերակ Արայեր կազատուի և զազտազնաց կիտխի ի Տըբխիս և անտի յԱւրոպա, :

«Ղուկասի փոխառն և մահէն զինի Լճմիածնի միաբաններն կծանուցանեն Տաճկաստանի ազգայնոցնոր Աթուղիկոսի ընտրութեան համար խորհելու: Աւ մինչդեռ խորհրդին մէջ կլինին, Յովսէփ Երբեպիսկոպոսն Երզնէթեանց, Երկայնաբազուկ անուանեալ, Ռուսիոյ նորոգ զաթթական շայոց Նուիրակն և Առաջնորդն էր՝ միանգամայն սաստիկ մտերիմն էր . . .

Եւս յաջողի Աթուղիկոսական ընտրելիներկայանալ Եզգին, ուստի հրովարտակ կըհանուի Օսմանեան տերութենէն, որ երթայ յԼճմիածին օծուելու: Սակայն մինչ Ռուսաստանէն կհասնի Տիխիս և մեծաշուք ընդունելութիւն կգանէ իւր իշխանագուն ազգակիցներէն, յանկարծ անակընկալ մահուամբ կվախճանի անդ առանց Լճմիածին երթալու և Աթուղիկոսական օծումն ընդունելու, :

«Յովսէփի մահուան լուրն Պօլիս կըտանի Լճմիածնի միաբան Լուիցի Ղաւթիկ Եպիսկոպոսն և հաւանութեամբ ազգին Աթուղիկոս կընտրուի Պօլոյ Ղանիէլ Պատրիարքն: Ղաւթիկ իրր աւե-

տաւոր ընտրութեանն Ղանիէլի կաճապարէ, յԼճմիածին և բունի (°) կգրաւէ Աթուղիկոսական Եթոռն: Եւս պատճառաստակ վէճ կծաղի Ղաւթի և Ղանիէլի մէջ և կաւէ մօտ երկու տարի, տեղի տալով ամօթալի զժտութեանց երկու կուսակցութեանց— Ղաւթեան և Ղանիէլեանց—: Ի վերջոյ Ղանիէլ կյաջողի Լճմիածին մանել և Ղաւթին անարգութեամբ ձգել յիշխանութենէ, և ապա ինքն (1802) Աթուղիկոսական Եթոռը բարձրանալով իշխանութիւն կվարէ ութ տարի . . .

Ձեռնաձուլ շինելով էս հեղինակութեան մէջ պարունակուած որ և իցէնիթի, մաաղիր եմ համառօտաբար ենթարկել քննադատութեան միայն վերոյ գրեալ յօդուածը՝ յնելով ի հարկէ զբաւոր փաստերի վերայ, և ապացուցանել որ, Ղուկաս Աթուղիկոսն էր ջերմաւանդ առ շայտատանեայց առաքելական սուրբ Եկեղեցին, և վերջին՝ անցեալ դարու մէջ եղած եթէ չէր նա մեր երեւելի Աթուղիկոսներէն մինը, գոնէ և չէր վերջինը, և թէ՛ Ղանիէլը քանի մի ամիս միայն է վարած իւր Աթուղիկոսական բացարձակ իշխանութիւնն:

Եթէ Ղուկասը հակուած լինէր պապականութեան և կամ փոքր ինչ հերձուածողութեան նշոյլ նշմարուէր նորա մէջ, անշուշտ նա չէր կարող քսան տարի շարունակ էնպիսի խառն և աղետալի ժամանակին փառաւորապէս զահակալի (ինչպէս շուտով կերեայ), և մանաւանդ ո՞վ որ փոքր ի շատէ ծանօթ է նրա ժամանակին եղած Լճմիածնի բազմաթիւ միաբանութեան, որ մերձ քառասուն Երբեպիս-

կոպոսներէ, Եպիսկոպոսներէ և Հարիւրաւոր Արդարապետներէ կրօնականոր, ամենեքեան էլ հլու և հնազանդ մնացած իւրեանց Աթուղիկոսին ցնորա մահն, անշուշտ կհամոզուի և կհերքէ նրա վերայ պատմուած արատութիւնն և ամբաստանութիւնն:

Ինչպէս կերելի էն ժամանակի շրջաբերականներէ, Եպիսկոպոսներէ և Արդարապետներէ ողջունագիրներէ (որոնցից ինչ ինչ մնացած են քովս, բայց ափսոս թողած եմ Թրիֆլիզ) և մանաւանդ Անդակներէ, մերձ տասն և չորս Աթուղիկոսացու կրեկիւր Երբեպիսկոպոսներ է ունեցել Մայր Եթոռն Լջմիածին, զոր օրինակ՝ հանրաժանօթ և բարեհամբաւն Մինաս, բարեհամբոյրն Բարսեղ, հեղահոգին Գանիէլ, պատկառելին Լփրեմ (սոքա յետոյ Աթուղիկոսացան), սեգ և յանդուզն Գաւիթ (որ բռնութեամբ գահակալեց), բարեմիան Գալուստ, ծերունիքն Յովակիմ, Սիմէօն, Գրիգոր և Ղազար, կենդանի նահատակն Յօհաննէս, միւս քաջասիրան Յօհաննէս, Արդան և Գրիգոր Եպիսկոպոսներն, չաւիցնելով Երտաղի, Ստաթէի, Հախպատի, սրբոյն Թովմայի և Եմենափրկչի վանօրէից և այլն և այլն Եռաջնորդներն, նոյնպէս պէտք է չմոռացած խրոխտ և վստահ իւր արդեանց, պաշտպանաց և իշխանական տոհմն ծագսան վերայ Լըրկայնարագուկ-Երզութեանց Յովսէփ Երբեպիսկոպոսն, որ միշտ սրտումը Աթուղիկոսութեան գահն կերկնէր և քանի մի տարիէ հետէ՝ Նաիրակութեան արդիւնք չէր առաքեր ի Ս. Եթոռն, միթէ նոքա կհանդուրժէին Ղուկասի Հոռովէականութեան կարծիք

քին և թոյլ կային նրան քսան տարի գոհակալել Սուրբ Լուսաւորչի անրիծ Եթոռն:

Յովսէփ Եպիսկոպոսի Երզութեանց՝ սկսեալ 1782 ամէն, ասել է Ղուկասի գահակալէն կրկու տարի յետոյ, յ1800 թիւն՝ ամեն նրա նամակների սեկրը, ըստ մեծի մասին նրա ձեռամբ գրուած՝ մինչև ցայսօր կպահուին նրա ազգական իշխան Կիկողայոսի Երզութեան — Լըրկայնարագուկի տանը: Նա յօրէ անտի, իւր քանի մի հարիւրաւոր նամակների մէջ որպէս առ Ղուկաս, նոյնպէս առ այլս ի Տաճկաստան, Հնդկաստան, Պարսկաստան, Հայաստան և առ Ռուսաց զօրավարներ, միշտ յարգանօք և ակնածութեամբ կլիշէ Ղուկասի անունը, նա մանաւանդ նրա մահուանէն զկնի ևս, և շատ անգամ կանուանէ զնա արժանաժառանգ գահակալ սրբոյ Եթոռոյն Լջմիածնի, արժանընտիր Աթուղիկոս, փոխանորդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, Եստուածարեալ Վահանայակետ, հոգևապետ և այլն, և այլն, և ոչ ուրեք չի յիշուիր՝ որ Ղուկասը հակալ էր իւր իւր և իցէ Հոռովէականութեան, կամ հեռացած լինէր նա սուրբ Լջմիածնէն և աքսորուած ուր ուրեք:

Լփրեմ Աթուղիկոսն ի1814 ամին կրնշանակէ Ղուկասի Երբեպիսկոպոսն (որ զկնի եղև Աթուղիկոս) վիճակաւոր Եռաջնորդ Արաստանի Հայոց, իւր Անդակի մէջ (զոր «ցուցակ վասն Ներսէս Երբեպիսկոպոսի, կանուանէ և զոր ունիմ այժմ առաջի աչացս Հայերէնն և տպուած Ռուսերէնը) կզրէ Ռուսաց նախարար Անկազ Գալիցյնին՝ «Ներսէսն ի հասակի հօթն և կէս ամաց իւրոց ասակն

յԱթոռն Արարատեան սշակերտեալ է յընթերցանութեան. . . . զամս տասն և երեք, այն է ցմեատասն ամն Պատրիարքութեան Երանելի և շարապետին մերում տեառն Ղուկասու: , և շու փոքր ինչ յետոյ կիրկնէ: « յետ վախճանի Սրբազան Պատրիարքին Ղուկասու ամ ու կէս գոլով խորհրդական զբազիր . . . »: ):

Չին արդեօք էս Երանելի և Սրբազանաճականներն անհերքելի ապացուցութիւններ, որ Ղուկասը չէ ենթարկուած կասկածանաց և ոչ խոշտանգուած Լջմիածնի միաբաններէն, իրր թէ նա համամիտ էր ուրումն խմորեալ պապականութեամբ Սարգսի Թէքիրաղցւոյ <sup>2)</sup>: Զազարէն աւելի շրջարեօականներ, ողջունագիրներ և կոնդակներ և նրանց պատճէններ սկըւած Սիմէօնի օծուելէն ց Ղանիէլի վերադառնալն Մարաղայէն Լջմիածին, ժո-

ղոված էի, նրանց մէջը չէր պատահած ինչ Ղուկասի վերայ էդպիսի կասկածանք ընթեռնուլ, ընդհակառակը միշտ յարզանօք կ յիշուէր նա, որպէս ի կենդանութեան, նոյնպէս և զկնի նրա մահուան:

(Անոցեւն է յետոյն)  
ԳԱԼՈՒՍՏ ՇԻՐՄԱԶԱՆԵԱՆՑ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ.  
(Շարունակութիւն)

Աշխարհն է ինամէ մասնաւորապէս վերաբերող քննուի: — Չէրոյ: — Ազգութեան այսոքիկ տեսակք ունին գերազոյն բարեխառնութիւն ըստ արտօքին օղոյ բարեխառնութեանն, զոր պահպանեն անկոց չորս կողմն, որպէս նոցա պահպանութեան՝ նոյնպէս ևս պտղաբերութեան աւթիւ: Այսոքիկ գործողութիւնք են այնպիսի ապաստանարանք՝ ուր օտարերկրեայ տարրական բոյսք ցրտապին օղոյ խստութիւնն ոչինչ զրեն, ուր զալար առնկըք և աղորիքն իւրեանց յաջողութեան յարմար վեճակին հանգիպին, ուր անբնական մշակութիւնն ծաղկանց փթթելոյ և պտղաբերութեան ժամանակն փութացուցանէ, որոց անսակք բազումք են:

1. Նարընջինեաց ջերոցն է մասնաւոր և վայելուչ կազմուած, որ ցուրա եղանակին մի քանի զարդարուն անկոց կայարան է որոշված, որք անկարող են դիմադրել ցըրտոց սաստիկութեան, մանաւանդ այսոքիկ անկոց համար է այդ ապաստանարանն, նարընջինեաց, մրտենեաց, նունենեաց և այլ հաստատատերիւ ծառոց:

(1) Աւստի՞ է արդեօք առած զտնական ծերունի Գարրիէլ Պատկանեանն, որ այսր ամի Արշալոյս Արարատեան անդրանիկ յրազրի համար 999 Թ. մէջ, իւր յօղուածումը կասէ. «Ներսէսն յԵջմիածին է առած վարդապետական աստիճանն, այն ինչ վերոյիշեալ ցուցակ ասացեալ Եփրեմի Կոնդակի մէջին (զոր օրինակած եմ՝ Ներսէսի ձեռագրէն) կ յիշուի առած էր նա այն աստիճանն 24 փետր. 1794 ամի ի Զմիւռնիա Պանիէլ Ալքեպիտոպսէն (որ յետոյ Աթուղիկոս ընտրուեցաւ), որի հետ և առաջին անգամն գնացած էր Պոլիս: Ներսէսի կենսագրութեան մէջին ծերունի զիտնականէն կան ինչ ինչ զանազանութիւններ, որոնք չեն վերաբերիր մեր ներկայ նպատակին:

(2) Լ. Մ. Չամչեանն իւր Պատմութեան Երրորդ հատոր, երես 694—714 կ յիշէ այս անուամբ Վարդապետ ոմն և յետոյ Պատրիարքացած Պոլիս 1664 ամին: Ի հարկէ սա այլ ոմն պէտք էր լինէր, ըստ որում մի գար առաջ էր Ղուկասէն: